

1. Փոստը ՁՈՐԵՔՆԵՐԻ և ՇԱՐՄԱՌ օրերը կը հրատարակուի :
2. Տարեկան բաժանորդագրինն է միայն չորս արծաթ միճիտ կանխիկ վճարելի, թէ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ դաւառաց համար :
3. Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :
4. Տեղական և դաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
5. Հասար մէկ զրշ. միճիտ, և կը գտնուի մասնաւորապէս Պահչէ գաւառ Սուճի Պօղոս աղայի խանութը :

# Փ Ո Ւ Ն Պ

6. Ծանուցման տողը 3 զրշ. է մէկ անգամի համար : Աւելի ատան կըլլայ աւելի, անգամներու համար :

7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն՝ Տէր Հ. Ս. Ալաճաճեան Կ. Պօլիս Պալատ - բազար Նաֆիէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE  
 H. S. Adadjian  
 Directeur du Journal Armenien  
 POUNTCHE — 16 Nafie Han. Balouk  
 Bazar Constantinople.

## Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Սերեւակայէն (Սէյէվըքէ) մեր ազգայինը հանրագրով մը բողոքներ են առ Պատրիարքարան, թէ տեղւոյն դատաւորը չընդունիր քրիստոնէից վկայութիւնը, և կը պնդէ որ վկայողը կրօնքով մահմետական ըլլայ : Ս. Պատրիարք չօր կողմանէ Բ. Դրան հաղորդուած ըլլալով սոյն բողոքը, կառավարութիւնը քննելու վրայ է թէ ի՞նչ խնդիր է որ կրօնական (չէրիի) դատարանի յանձնուած է : Մեր գիտելիք թէ, լուծուած է քրիստոնէից վկայութեան խնդիրը : Ըստ որում մահմետական կրօնքը բացարձակապէս կ'մերժէ իսլամ չեղողին վրկայութիւնը, և ըստ որում Շէրիաթի այս տրամադրութիւնը բարեփոխել անկարելի է, բայց միանգամայն դարուս քաղաքականութիւնն ու քաղաքակրթութիւնը չեն ներքեր որ տակաւին նա շարունակէ ոչ-մահմետականաց դէմ եղած այս անարդանքը, ուստի որոշուած և կայսերական հրովարտակա հռչակուած էր թէ քրիստոնէի մը դատը, ո՞վ որ ալ ըլլայ և ի՞նչ կրօնքէ ալ որ լինի հակառակորդը, անպատճառ պիտի յանձնուի քաղաքական դատարաններու (մէհալայի նիզամիյէ), որոց մէջ չը կայ կրօնի խտրութիւն : Սակայն, չեմք գիտեր և կըրմանսով թէ ի՞նչպէս կըլլայ, որ մեր Օգոստ. Վեհապետին կամաց և հրամանին հակառակ, քրիստոնէի մը դատը դարձեալ Շէրիի դատարանին կ'յանձնուի, ուր քրիստոնէայն վկայութեան մասին այսպէս կանարգութիւն և առիթ կը տրուի իրաւացի բողոքանաց և արտաքին կծու քննադատութեանց ու ազդարարութեանց, և Բ. Դուռը որ պետութեան ու երկրին մահու և կենաց խնդիրներով ծանրաբեռնեալ է արդէն, այդպիսի խնդիրներ ու բողոքներ ալ լսելու և դրադելու հարկին մէջ կը գտնուի :

— Սոյ Սթոռոյն թըլան աւուռն մէկ ընդարձակ գետինը որ ի վաղուց աղբին սեպհականու

թիւնն եղած է, տեղական կառավարութիւնը Ս. Աթուէն աւուռն կուղէ իրրե ստացուած տէրութեան, և արդէն չէրքէս դաղթականներ ու աշիրէթներ բնակեցուցեր է անդ, առանց ուշ դնելու այն կալուածագրին որ տրուած է ժամանակաւ Գօզանի կառավարութեան ղէկը վարող պաշտօնէին կողմանէ : Ս. Պատրիարք Հայրը տեղեկանալուն պէս բողոքեց առ Բ. Դուռն, պաշտպանելով աղբին այս նուիրական իրաւունքը : Մեր ստուգածին նայելով տակաւին վերջացած չէ խնդիրը, և Բ. Դուռն ու Պատրիարքարանը բանակցութեան մէջ են : Յուսալից եմք թէ կայսերական կառավարութիւնը կրարեհաճի պաշտպանել Սոյ Աթուոյն իրաւունքը ի գոհունակութիւն ընդհանուր Ազգիս, որոյ առջեւ մեծ նշանակութիւն ունի յիշեալ Աթուր : Յուսալից եմք, թէ խնդիրն այսպէս վերջանալով յարմար առիթ կուենանալ Բուսիոյ կառավարութեանն ալ միևնոյն արդարասիրութիւնը խնդրել Ս. Էջմիածնի սեպհական գիւղօրէից խնդրոյն համար, որ այս օրերս երևան ելած է ի մեծցաւ ընդհանուր աղբիս :

— Արդէն գրած եմք թէ ձմրան տարօրինակ սասակութեան և արմտեաց տարապայման նուազութեան ու սղութեան պատճառաւ, Նիկոմիդիոյ և շըրջազայից փողովուրդը վերջին աստիճան թշուառութեան մատնուած է : Վերջին նորագոյն լուրերն ալ կհաստատեն զայս : Մարդիկ ու անասունք զոհ կերթան անօթութեան : Նիկոմիդիոյ առաջնորդական գեր. փոխանորդն խնդրած էր Ս. Պատրիարք Հօրէն, որ 20 հազար դրիւ ցորեն զրկուի այս սոսկայի վիճակին առաջն առնու համար : Նորին Սրբազնութիւնն հեռագրոյն պատճէնն անմիջապէս թագրիով մը Բ. Դրան հաղորդեց, և անյապաղ օգնութիւն խնդրեց :

— Սովելոց կեդրոնական մասնաժողովը, ո՞չ միայն ներկային այլ և ապագային համար հոգ

կտանի : Ամերիկեան խնձորի (փաթաթէսի) մշակութիւնը հայաւարանակ դաւառներու մէջ ընդհանրացուելու համար, յիշեալ խնձորին մշակութեան եղանակն ուսուցանող տետրակներ տպել կուտայ՝ հայ ու հայագիր տաճկերէն ընդուօք : Տետրակը գրուած է 30 տարիէ հետէ սոյն մշակութիւնը իրեն մասնագիտութիւն ընող գիտնական ազգայնէ մը : Մասնաժողովն որոշած է առաջարկել Պատրիարքարանի, որ Բ. Դրանն խնդրէ երկու տարի տասանորդ չառնու ամերիկեան խնձորի համար :

— Սովելոց մասնաժողովը մինչեւ ցայսօր 4,000 լիրայի չափ հանգանակած, 3,000 ը դրկած է, և մնացածը զրկելու համար հեռագրով պատասխանի կպատէ : Կը կարծուի, թէ ազգային հանգանակութեան բոլոր արդիւնքը 6,000 լիրայի չափ պիտի ըլլայ :

— Ամսոյս 27 ին հինգշաբթի զիշեր տրուելիք պարահանդիսին կարգադիր մեծարդոյ մասնախումբն՝ ամենայն փութով կաշխատի հանդիսին փառաւորութեան ու արդիւնաւորութեան, և հանդիսականաց հանգստեան ու գոհունակութեան համար : Նոյն զիշերը մասնախմբին բոլոր անդամք անձամբ վերակացութիւն պիտի ընեն պարահանդիսին մինչեւ վերջը, և նշանաւոր ազգայնոց որդիք հանդիսավայրին դուռը գտնուելով պիտի ընդունին հանդիսականները : Խումբ մը ոստիկանք և թաղապետութեան պահակք պիտի հսկեն մինչեւ առաւօտ : Տարօրինակ կերպով լուսավառութիւն պիտի ըլլայ, և հանդիսականք դժգոհ չպիտի ըլլան սրարմաչէթի հեղեղներու պատճառաւ : Կայսերական նուազածուաց խիստ ընտիր խումբ մ'ալ պիտի գտնուի, իստ գգուշութիւն պիտի ըլլայ, որ անվայել անձինք չկրնան հանդիսավայրը մտնել : Ձէնքով ո՞չ ոք պիտի չընդունուի ներս : Առանց դրամ ուղուելու, շքարեղէն և այլն պիտի տրուի երկու անգամ՝ օթեակները դրտ

նուող, և մէկ անգամ՝ սրահը տեսնուող հանդիսականաց : Վերջապէս շատ փոյթ կտարուի, մինչեւ ցարդ կատարուած պարահանդէսներուն ծախքէն քիչ դրամով առաւել շուք ու փառաւորութիւն տալ սոյն պարահանդիսին : Յատկապէս նշանակութեան արժանի է Յովհաննէս Եֆէնտի Մանուկեան, որ յանձն առած է միայն 700 զրուշով և բոլոր պէտք եղած թուղթն ալ իւր վրայ ըլլալով՝ տպագրական բոլոր պիտոյքն հոգալ : — մուտքի համար քանի մը հազար տոմսակ ոսկեղօծեալ, յայտարարութիւն, հրաւիրագիր : Յաջորդ թերթով պիտի հրատարակեմք, պարահանդիսին յայտարարութիւնը :

Մեծ յոյս ունիմք, թէ այս հանգէսը և այս առիթը ձեռնարկեալ հանգանակութիւնը շատ արդիւնաբեր և նպաստաւոր պիտի ըլլայ՝ դժբաղդ սովելոց և միանգամայն ընկերութեան համար : Կարգադիր մասնաժողովոյ անդամ Տետրք, Տիկնայք և Օրիորդք ամենայն փութով ու եռանդեամբ կաշխատին : Այս շաբթուան դժնդակ օգերուն իսկ յորս շատ այր մարդիկ չկրցան տուներէն դուրս ելնել, փախկասուն տիկնայք անձամբ ելան շրջապայեցան երեւելի ազգայնոց ու օտարազգեաց տուներն ու վաճառատունները և տոմսակներ մատուցին : Վսեմ. Աբրահամ վաչա, վսեմ. Սիմոն Պէյ Մադսուտեան, Պ. Գամարա, Պ. Ծօրնի, վսեմ. պարսիկ դեսպանըն և այլ բաղում նշանաւորանձինք յօժարակամ ընդունել, և խոստացեր են իրենց ներկայութեամբ պատուել հանգէսը : Այս շաբթուան արդիւնքէն ալ 400 լիրա զրկուեցաւ սովելոց կեդրոնական մասնախմբին :

Չմոռնամք նշանակել այժմէն, թէ կարգադիր մասնաժողովին կողմանէ շնորհակալեաց ուղերձ մը կպատրաստուի, պարահանգիսին յետոյ՝ ի դիմաց Ազգանքուր - Հայուհեաց ընկերութեան Օգոստափառ Սուլթանին մատուցանելու համար : Ուղերձը պիտի դրուի խիստ ճարտարահիւսքը :

սակի մը մէջ, վրան «Թէշէրբիւր» (չնորհակալութիւն) բանուած :

Կրիւթամը այժմէն մեր շնորհակալութիւնը նուիրել՝ այս ամենայն աշխատութիւն անձնուրաբար չենայող աղին ճեարց, Տիկնանց և Օրիորդաց :

— Կր լսեմք, թէ թաղապետութեանց մէկուն կողմանէ գրուեր է ազգային թաղական խորհրդոյ մը, որ իւր թաղին համար Մըզտար մը ընտրէ և ընտրելոյն անունը հաղորդէ թաղապետութեան, որպէս զի պէտք եղած պաշտօնական յարաբերութիւնները նորա հետ ընէ. սակայն թաղական խորհուրդը պատասխաններ է թէ Հայոց ազգային սահմանադրութիւնը, որ կայսերական կառավարութեան վաւերացեալ և կայսերական օրինաց կարգէ անցած է, Մըզտարութեան պաշտօնն ալ թաղական խորհրդոյ յատկացուցած է, և թէ թաղական խորհուրդը չկրնար օրինազանցութիւն ընել, և պարտի Պատրիարքարանի հրահանգն ու հրամանն առնուլ : Կը կարծուի, թէ այդ թաղապետութիւնն Մըզտարի մը ընտրութիւնն ուղած է, մասնաւորապէս կարճամտական և այլ վրկայադրերն նորա կնքովն առնելու համար :

Բ. Գուռը դեռ պատասխանած չէ կնքոյ խնդրոյն համար մեր Պատրիարքարանէն գրուած վերջին դրոյն :

— Երէկ առաւօտ վանէն հեռադիր մը հասաւ առ Ս. Պատրիարք Հայրն, յորում գրուած է սապէս. — « Կառավարութեան խնդրուած 200 դրիւ ցորենին համար պատասխանը չառնուեցաւ. սովը օր ըստ օրէ կաստկանայ. Աղրակի դաւառին մէջ 100 էն աւելի անձինք սովամահ եղած են. ուրիշ գաւառաց մէջ ալ ձմեռը ստատիկ է, ճանապարհները գոց են և ժողովրդը դեռն թշուառութիւնը յետին աստիճանի հասած. մեծ և անյաղաղ օդնութիւն պէտք է » :

Այս ամենատխուր հեռադիրն արատաւօք ընդունելով Ս. Պատրիարք Հայրը՝ փութացաւ այս անգամ երկար նկարագիր մ' ալ ուղղել առ Բ. Գուռն՝ սովուն ծանր աղետից և ժողովրդեան բաղմադիմի անտանելի տառապանաց վրայ, և Պատրիարքարանի ձեռք առած միջոցներուն ու ազգային հանդանակութեան անդաւակնութիւնը ծանուցանելով՝ աղաչեց որ կայսերական կառավարութիւնը բարեհաճի անօրինելի նշ որ պարտ ու արժան է :

Վազըթ երէկ կնքով մը հա-

չիւ ուղած էր՝ սովեւոյ համար կարգեալ մեր ազգային յանձնաժողովէն. եթէ լսն նպատակը հաշիւ տեսնել է, և եթէ՛ ինչպէս ինքը կառարկէ, հաշոյն հրատարակութիւնն օգտակար կըլլայ, աւտիկ այսօր հրատարակած եւք մեք. կրնայ տեղեկանալ, և զթուրթիւն ու օգնութիւն խնդրել թախանձանօք, հանդանակութեանն արդէն եղած և հաւանակամարար ըլլալիք արդիւնքն ու սովուն ծանրութիւնը մարդասիրաբար և արդարասիրաբար ի կշիռ բաղդատութեան գնելով :

— Իսկիւստարի մէջ բաւական մեղադրանք կ'ըլլուի տեղւոյն Սէլամիլէի վարժարանին պատուարժան Հոգաբարձութեան անդամոց մէկուն անկողի վարմունքը : Հարէնց մեծ. Մարտիրոս Եֆէնտիի հրատարակած խնդրը Հոգաբարձութեան ժողովոյն մէջ յուզուած ժամանակ, այդ մէկ անգամը դարձեր ըսեր է դրադրին, թէ յատկապէս յանուն իմ նշանակէ թէ « դոհութեամբ կընդունի Հարէնց Եֆէնտիի հրատարականք ». մինչդեռ արդարասիրութիւնն ու երախտագիտութիւնը՝ եթէ ունենար ինքը, կարհանջէին իրմէ՛ յաւայանել այդ հրատարական վրայ, որովհետեւ, Հարէնց Եֆէնտի Սէլամիլէի վարժարանին համար նիւթապէս ու բարոյսպէս օգտակար հանդիսացած է և բոլոր սղջամիր թաղեցին կվկայէ, և մինչդեռ ինքն այդ անգամը տակաւին մեզիւ չարի օգուտ չունի, և ճշմարիտն ըսելով՝ օգուտ ընելու ալ կարողութեան զուրկ է : Չեմք նշանակեր այդ անգամին անունը. բայց կցաւ ինք նկատելով որ տակաւին շատ ժամանակ կրթութիւն առնելու կարօտութիւնն ու պէտք ունեցող մէկը կրթական մեծ յարկի մը հոգաբարձութեան մարմնոյն մէջ կգտնուի :

— Կիպրոսէն հեռուեալ տեղեկութիւնները տրուած են մեզ մարտ 3 թուով նամակաւ մը :

« Տեղւոյս առաջնորդ Գեր. Տ. Չարաբիա Օ. վարդապետի հրաւիրանօք և նախադահութեամբ, Մսիոյ սովեւոյ ինչպատ հանդանակութեան յանձնաժողով մը կազմուեցաւ, որոյ անդամք են՝ Արեւեան Յովսէփ, Եաղըճեան Յովսէփ, Երամեան Պօղոս, Իւթիւճեան Արիստոս, Մելիքեան Մելիքեան, Մամճեան Յարութիւն և Շահինեան Գեօրգ մեծ. Եֆէնտիները : Հանդանակութիւնն անմիջապէս սկսաւ, և առայժմ 20 լիւրայի չարի գոյացաւ : Յոյս կայ, թէ այս դումարը պիտի բաղմապատիկ, կիպրացի ազ-

գայնոյ սակաւաթիւ ըլլալուն հակառակ : Յանձնաժողովն օտարազգեաց զթուրթեան ալ պիտի գիմէ : Խորհուրդ կըլլայ պահանգէս մ' ալ տալ ի նպատ սովեւոյ : Գեր. Առաջնորդն յատկապէս յորդորանաց ազգու գըրեր գրեց կղզոյն բոլոր հայաբնակ կողմերը, հայերէն ու տառիկերէն լեզուօք : Յանձնաժողովն անգամը անձամբ պիտի շրջազային հանդանակութեան համար :

« Ըստ տրամադրութեանց սահմանադրութեան և ըստ հրահանգի Պատրիարքարանի, շնորհիւ Գեր. առաջնորդին՝ ազգային թաղական խորհուրդն ընտրուեցաւ, և տեղեկագիրը Պատրիարքարան կը դրուի ի վաւերացումն : Նորընտիր թաղական խորհուրդը չորս անգամէ կրապկանայ, որք են Շահինեան Գեւորգ՝ Եաղըճեան Յովսէփ՝ Մելիքեան Մելիքեան և Արեւեան Յովսէփ մեծ. Եֆէնտիները, ազգասէր և դործունեայ անձինք :

« Երէկ առաւօտէն մինչև ցայսօր ժամը 4 1/2, առատ ձիւն կաեղոյ կղզոյս մէջ. տարօրինակ գէպը մը կհամարի ժողովուրդը և կ'յուսացուի թէ առատութեան նշան է. լեռ ու դաշտ սպիտակացած են » :

— Ժողովրդային վիճակահանութիւնը, վաղը, ժամը 7 ին, հրատարակաւ պիտի կատարուի Մէրճեան-չարչի Եաղըճ խանին վերի յարկը :

Օգոստ. Սուրբամը բարեհաճեցաւ երրորդ աստիճանի Մեծիկէ պատուանշան ընծայել՝ Եղիպտոսի ազգայնոց երեւելիներէն վսեմ. Արքահամ Բարթող Եֆէնտիի : Նորին վսեմութեանը Արեւիսանդրայէն երկաթուղիով մէկ ժամու ճանապարհ հեռի Ապուհումուս ըսուած բաղմաբնակ ընդարձակ ու գեղեցիկ գիւղը կընակէ, և ամբողջ գիւղին տէրն է : Մեծաշուք ընդունելութեամբ կպատուէ իւր զիւղը գոցող ազգայինն ու օտարապէսները, և իրեն զխնոյ կարօտները գոհ և զուարթ կը գարձունէ : Ինչպէս իւր մեծահամբաւ նախնին նոյնպէս և ինքն ծանօթ և սիրելի են Եղիպտոսի իշխանական ազգատանին և աւագանւոյն. նախորդ խալիֆներն յատկապէս յայց երկերով առ նախնիս և առ ինքն իւր, պատուած ու դոհունակութիւն յայնմա՛ն են՝ տեսնելով զիւղին բարեզարդ ու գեղեցիկ վիճակն : Վսեմ. Արքահամ Բարթող Եֆէնտի, մեր այն մեծասանց կարդէն է, որ կը

ճանչանն առ ազգն ունեցած իրենց անհրաժեշտ պարտաւորութիւնները. դեռ շատ ժամանակ չէ, որ ուրիշ բարեբարութիւններէ գատ, 400 լիւրա ընծայեց Գահլիկի ազգային սնտուկին, կարեւոր հաստատութեանց համար : Այս տեղեկութիւններն ունենալով մեք նորին վսեմութեան և իւր նախնեաց վրայ, մեծաւ հաճութեամբ կը շնորհաւորեմք զինքն այն կայսերական ընծայատուութեան սովիւ, և ամենայն բարօրութիւն կը մաղթեմք :

Պատշաճ կհամարեմք յիշել նաեւ այս բարեպատեհ աթիւ, թէ Արքահամ Բարթող Եֆէնտի Սպանիոյ, Իտալիոյ կառավարութեանց, և ռուսական մեծ ընկերութեան մը կողմանէ ալ (հրովարտակաւ Չարին) պատուանշան ընդունած է :

ԱՅՆ ԵՒ ԱՅՆԲ

Սերպիոյ կառավարութիւնը Բ. Գրան ծանուցեր է, թէ ալպանիացիք մօտերս Սերպիոյ վրայ յարձակելու պատրաստութիւն կտեսնեն, և Բ. Գուռն ալ զանոնք արդիւլու համար պէտք եղած հրամանները զրկեր է տեղական իշխանութեանց :

— Եֆէնտիպարի կառավարիչ Համիտ փաշայի և աւստրիական զօրաց հրամանատարին համահաճութեամբ որոշուեք է Լիմի սահմանին վրայ բնակեալ ժողովրդեան զէնքերն առնուլ, յապահովութիւն դաւառին :

— Պաղատանն առ Լէվինդ-Հէրբլո գրեր են, թէ Պարս պատուող անդղիական պատեւազմիկ նաւու մը նաւաստեաց ու օսմանեան ծովային զօրաց ու մանց մէջ կուի մը պատահելով երկու կողմանէ ալ վիրաւորուողներ եղեր են, և թէ Պարսայի մէջ անդղիական հիւպատոս չը գտնուելուն պատճառաւ, Պաղատանի հիւպատոսը հիւպատոսարանին բժիշկը հան փութացուցեր է վիրաւորեալները դարմանելու և անցքը քննելու համար, սակայն բժիշկն հան հասած ատեն անդղիական նաւն դէպ ի Պոմպէ ճանրայ եղած է եղեր : Թէրճէմանը - Հաղիլով անհիմն և չարամտոց հնարք կհամարի այս լուրը :

— Եանեպի կուսակալ կարդեցաւ Եէմէնի նախորդ կուսակալ Մուսթաֆա Ասիմ փաշա :

— Սէլանիկի նորընտիր կուսակալ Ապետին փաշա հինգշաբթի երեկոյն իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ : Չորեքշաբթի երեկոյ Օղոստ. Սուրբամին ներկայացաւ, և նորին վեհապա-

ուսմանը մեծաւ յարգանքով ընդունելով զինքը՝ երկրորդ աստիճանի Մէճիսիյէ պատուանդան, երկու ընտիր ընտրվելու սուր մը ընծայեց :

— Կրտսն, թէ մայրաքաղաքիս դաղդիական դեռականը, յանուն իւր կառավարութեան, ծանուցագիր մը տուեր է Բ. Գրան՝ ներքին ու արտաքին պարտոց համար Բ. Գրան ու Ղալաթիոյ սեղանաւորաց մէջ հաստատուել պայմանադրին վրայ :

— Ռուսիոյ կառավարութիւնը 6000 ֆրանկ գրկեր է, Արեւելեան-Ռուսիոյ մահմեդական գաղթականաց բաշխելու համար :

— Կարծուի, թէ Շիշլիի Վէլի Մէհմէտի դատաստանն այսօր կը վերջանայ : Ըստ Պարտի. Պոսֆորի՝ այս և ուրիշ խնդրոց համար դեռականը հինգ-չարթի ժողովեր և խորհրդակցեր են անգղիական դեսպատատան մէջ : Մայրաքաղաքէս Եւրոպա հեռագրեր են, թէ տաճկաց մոլեռանդ մասը կաշխատի Վէլի Մէհմէտը մահուան պատժէ ազատելու համար :

— Միւշիք Պուստ վաշայի դատաստանն ալ վերջանալու մօտ կերելի :

— Պէտք է գիտնալ և զգուշանալ, թէ այս օրերս Պոլսոյ կողմը տեղ տեղ քանի մը մարդիկ կերծ սաթէ սիկառնիկներ կըրելու ըստ սաթ վաճառելու համար ամեն ճարտարութիւն ու հնարքի գործ կընեն : Գեղեցիկ պահարաններու մէջ զետեղած են, և մէկ քանին միանալով մէջերնէն մէկերկուքը կըրելու յաճախորդ կձեռանան :

— Ինչպէս արդէն ծանուցուած էր, Եգիպտոսի մէջ կալուած գրաւ ընդունելով և գլխաւորապէս պայմաններով փոխատուութիւն ընելու համար գրամատուն մը հաստատուեր, և գործի սկսեր է : Երկրին համար շատ օգտակար կհամարուի այս հաստատութիւնը :

— Վերջին ահագին փոթորիկներուն ժամանակ թաթաղուս երկու քսակահատք մարդու մը պատահելով և տեսնելով որ քովը գրամ չկայ, վրայի լոթերը տուեր, և միայն շապիկն ու վարտիքը թողեր են : Մարդը փուռ մը մտեր և տունէն հանգերձ բերել տուեր է :

— Ռուսիոյ Չարը հաճութիւն չէ տուեր Պուլքարիոյ սահմանադրութեան մէջ փոփոխութիւն ընելու համար, հակառակ բաղձանաց իշխանին Պուլքարիոյ :

— Բուսանիոյ իշխանին եղբայրը՝ Բուսանիոյ գահաժառանգ պիտի անուանի :

— Գերմանիոյ կայսրը առ Չարըն Ռուսիոյ գրած մէկ թղթին մէջ ըսեր է, թէ ինքն քանի որ ողջ է՝ թող չպիտի տայ որ Գերմանիոյ և Ռուսիոյ մէջ պատերազմ բացուի :

— Ինչպէս Փարիզի ռուսական դեսպանը Բեզրայուրի գնաց նոյնպէս և Բեզրայուրիի գաղղիական դեսպանը Փարիզ պիտի կանչուի, և կկարծուի թէ պատահաբար Հարթմանի խնդիրն է կարծողներ կան թէ այս պատահաբար Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ բաւական ջրտուրթիւն տիրած է, և ծանր հետեւանք պիտի ունենայ :

— Չորապետ Իկնաթիէվ Չինաստանի մայրաքաղաքը կըրկուի :

— Անգղիոյ կառավարութիւնը կտարոյտ տեսարակաւ հրատարակեր է՝ Յունաստանի խնդրոց վերաբերեալ պաշտօնական բանակցութեան գրքերը :

— Ռուսիոյ Չարը չնորհակալեաց զիր գրքեր է առ Պիլզնարի իշխան, իւր գահակալութեան անթիւ կըյոմ կայսեր գրած թղթին ներքեւ նորա ստորագրութիւնը գտնուելուն համար :

— Չորապետ Գոթմանգօֆ Բեզրայուրիի զօրաց հրամանատար անուանուեր է՝ փոխանակ կուրգօ զօրավարի :

— Անգղիոյ արտաքին գործոց նախարար լորտ Ստիւարտը, ըստ հրահանգի բժշկաց, Գաղղիա պիտի երթայ օգտափոխութեան համար և վեց շաբաթ մնայ :

— Բեզրայուրիի ձմեռային պալատին ահանին զոճ գացողներուն ընտանեաց ու վերադառեալ զօրաց համար հանդանակութիւն բացուեր, և մինչև ցարդ 37,458 արծաթ բուպի և 4,080 ֆրանկի ոսկի հաւաքուեր է :

— Բեզրայուրիի անգղիական դեսպանը թաշկէնտէն Ապտալ-Բահման Խանի Աֆղանըստան անցնելուն վրայ Ռուսիոյ կարծիքն Կորչաքօֆ իշխանէն հարցուցած ըլլալով իշխանը պատասխաներ է, թէ Ռուսիոյ կառավարութիւնը յիշեալ Խանին հետ ո՛ր եւ է յարաբերութիւն չունի. բայց եթէ նա յաջողի տիրել Հերաթի՝ Ռուսիա պիտի վաւերացունէ նորա իշխանութիւնը, և Ռուսիա կը փափաքի որ Հերաթի երկիրը Ռուսիոյ ու Անգղիոյ մէջ չեղար սահման մը ըլլայ :

— Աֆղանստանէն եկած վերջին լուրերուն նայելով անգղիացոց հնարանգող աֆղան ցեղերն դարձեալ ապստամբեր են, և Անգղիա հարկադրուեր է իւր զօրութիւնն աւելցունել :

— Աւստրիոյ լրագիրը գրեր են, թէ Աւստրիոյ ձեռքը գտնուող խաղաղական գաւառները խաղիոց հետ միացունելու նպատակաւ կաղմեալ ընկերութեան, և ալ պանիացոց մէջ միաբանութիւն հաստատուած է :

— Անգղիոյ հասարակաց Խորհրդարանը գոցուեցաւ ամսոյս 12 ինչ Անգղիոյ Թագուհին փակման ճառին մէջ ըսեր է, թէ Անգղիա բոլոր կառավարութեանց հետ բարեկամական յարաբերութիւն ունի, և թէ՛ Աֆղանստանայ խնդրոցն ի մօտոյ վերջանալուն յոյս կայ :

— Բուսանիոյ իշխանութիւնը որոշեր է, որ Բուսանիա գացող օտար հպատակք երբ ուղեն 30 օրէն աւելի կենալ, պարտաւոր ըլլան իրենց անցագրերը քաղաքապետութեան յանձնել և բնակութեան աղատութեան գիր ըստանալ : Այս կարգադրութեան հակառակ վարուողներուն համար՝ ոստիկանութիւնը առանց անցագրի գտնուող ճամբորդաց վերաբերեալ օրէնքը պիտի գործադրէ :

— Պեղծիոյ թաղաւորին գլխաւոր հետ Աւստրիոյ գահաժառանգին ամուսնութեան հանդէսը առաջիկայ 1884 տարւոյ գարնան պիտի կատարուի ի Պրիւսէլ, և ապա ի Վիէննա կրոնական արարողութիւնը :

— Քեապիլի վրայ քաղաղ 20 հազար Աֆղանք՝ նախկին էմիր Շիր Ալի Խանի թիկնապահներէն Մէֆէր Խանի հրամանին ներքեւ կգտնուին եղբեր :

— Փարիզի մէջ մարդ մը իւր կեանքէն զոտելով, և ուզելով որ իւր 13 տարեկան որդին ալ աշխարհիս կենաց տառապանքները չկրած ազատէ, սենեակի մը մէջ ինքը և որդին փակուեր, և ածուկ զնելով պատկեր է : Հետեւեալ օրը զինքը մեռեալ, իսկ խեղճ որդին կխամու գըտեր են :

Երկու կոչակալքք այս օրերս մէկ մէկ մեծ շահ ըրեր են : Յատկապէս կհրատարակեմք, որպէս զի մեր հայ կոչակալքք գիտնան, և զգոյշ ու աշխուրջ գըրանուին այսպիսի մեծ շահերէ չը զրկուելու համար : — Ազնուական և առատաձեռն մարդ մը կոչակալքի մը երթալով շատ աղաչեր է, որ լաւ և ընտիր կօշիկ (պօթին) մը շինէ իրեն համար, և ծանուցեր է թէ յօժարակամ կուտայ մինչև 2 ու կէս լիրա . կօշակալքք ուրախացեր և ապահովուցեր է զոճ ընել զինքը ըստ ամենայնի . ազնուականը ալ ոտքին չափը և արծաթ մէճիսիյէ մը կանխավճար տալով

մեկներ, և ուրիշ կօշակալքի մը ալ երթալով՝ միև նոյն յանձնարարութիւնն ըրեր, և արծաթ մէճիսիյէ մը ու ձախ ոտքին չափը տուեր է, ինչպէս առաջինէն նոյնպէս երկրորդէն խնդրելով որ այս ինչ օրը հասցունեն կօշիկները : Ազնուականը որոշեալ օրը առաջին կօշակալքին երթալով և կօշիկն պատրաստ ըլլալը իմանալով, ալ ոտքինը աւեր գացեր է նայելու համար, և երկրորդէն ալ ձախ ոտքինը : Երկու կօշակալքներն ալ տակաւին կըրպասեն և յախտեան պիտի ըսպասեն ազնուականին գալուն, գրամը բերելուն և մնացած մէկ մէկ կօշիկները առնելուն : Մեր ազնուականն այժմ ալ երկու արծաթ մէճիսիյէով խիստ ընտիր կօշիկ մը կվայելէ :

Ա Ձ Գ

Պօլսոյ և դաւառաց մէջ Փուսնջի հետ բաժանորդագրութեան հաշիւ ունեցողներէ կինդրուի, որ բարեհաճին վճարել անյապաղ :

Պօլսոյ և դաւառաց մէջ Փուսնջի հետ բաժանորդագրութեան հաշիւ ունեցողներէ կինդրուի, որ բարեհաճին վճարել անյապաղ :

ԱՐՈՒՆԵՍ

ԵՐԿԱՅԵԱՆՅՈՒԹԵԱՆ

որ է

Առողջ երկայն ու երջանիկ ապրելու ուսումը .

Շարադրեց

Ա.Ն.ԳՐԻՍԱ ՓՈՓՈՎԻԶ

Սուլուսի հայադրի բժիշկը

Հրատարակիչ

Ս. Գ. ՊԱՏԻՉՊԱՆԵԱՆ

Հանգուցեալ Անդրէաս Փոփու վիշ նշանաւոր հայադրի բժշկին սոյն ընտիր երկասիրութիւնը ուրոյ առաջին տպագրութիւնը 30 տարի առաջ ի լոյս ընծայեալ է, բոլորովին սպառուելով և նորին օգտակարութիւնը ամեն կարգի անձերէ ճանչցուած լինելով, այս երկրորդ անգամ տպագրեցաւ մաքուր և կանոնաւոր տառերով :

Կեդրոնատեղին է Ենի ճամի Ղուկասեան գրատունը . նաեւ ամեն գրալաճառաց քով կը ծախուի ի դին 10 դրուշ :

Պօլսոյ մէջ և Պօլսոյ մերձակայ տեղերու համար վարժուհի մը պատրաստ է, հայ ու գաղղիարէն լեզուաց և ձեռագործի բաւական հմուտ : Պէտք ունեցողը կհրաւիրուի առ տնօրէնութիւն լրագրոյս :

